Հայաստանի Հանրապետությունում կանանց զինծառայության վերաբերյալ պետական քաղաքականության խնդիրները

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Չորս դարերի փորձն ու դասերը

Միջազգային փորձն ու փաստերի վրա հիմնված վերլուծությունները վկայում են զինծառայությանը կանանց մասնակցության արդիականությունը: Կանանց զինծառայությունն առաջատար պետությունների զինված ուժերում, այդ թվում՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Իսրայելի, Գերմանիայի, Իտալիայի և այլ բանակներում ինչպես զորակոչային, այնպես էլ պայմանագրային սկզբունքով, ապահովում է այդ բանակների մարտունակությունը, դրանց հրամկազմի կողմից ընդունվող որոշումների ճկունությունը, խթանում է բանակ-հասարակություն ավելի սերտ և ուղղակի հարաբերությունները: Կին-զինծառայողների Ներկայությունը զինվորական կոլեկտիվներում ապահովում է տղամարդ-զինծառայողների վարքի լրացուցիչ բարոյական վերահսկողությունը, մեղմում է հնարավոր միջանձնային կոնֆլիկտները, կասեցնում ֆիզիկական բռնության դեպքերը տղամարդկանց կոլեկտիվներում:

ՀՀ զինված ուժերի արդիականացման և զարգացման առումով կանանց ներգրավումը զինծառայությանը խիստ արդիական է: Վերոնշյալ փաստարկներին հայաստանյան իրականության մեջ ավելանում է պետության անվտանգության ապահովումը տղամարդու հետ մեկտեղ իրականացնելու, Հայոց բանակի գործառույթների իրականացմանն ու մարտունակության բարձրացմանն աջակցելու հայ կնոջ՝ պատմականորեն բազմիցս հաստատված մարտունակ դերն ու պատրաստակամությունը:

Պարտականությունը՝ բոլորին, հնարավորությունը՝ պայմանագրային

Կանանց զինվորական ծառայության խնդիրներն ընդհանուր առմամբ կարգավորված են, այդուհանդերձ մի շարք դրույթներ հստակեցման կարիք ունեն: ՀՀ Սահմանադրության Հոդված 46-ը սահմանում է. «Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը»: Իրավական-օրենսդրական կարգավորումը սահմանադրական այս պարտականությունը տարբեր կերպ է բաշխում քաղաքացիների մեջ՝ հատկապես սեռային պատկանելիության առումով: Այսպես, «Զինապարտության մասին» ՀՀ օրենքում զինապարտներ են համարվում նախազորակոչային, զորակոչային տարիքի և պահեստազորում հաշվառված արական, ինչպես նաև զինվորական մասնագիտություն ունեցող կամ զինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացիները: Ընդ որում, ի տարբերություն արական սեռի քաղաքացիների, իգական սեռի քաղաքացիների՝ ՀՀ պաշտպանությանը մասնակցելու «սահմանադրական պարտականությունը» փաստացի պարտադիր չէ, քանի որ բացառապես իրականացվում է պայմանագրային հիմքով: Իգական սեռի քաղաքացիները զինվորական ծառայության են անցնում կամավոր կամահայտնությամբ: Հատկանշական է, որ կին զինծառայողը պայմանագրային զինվորական ծառայության ընդունվում է, եթե կա թափուր պաշտոն, որը կարելի է համալրել իգական սեռի զինծառայողով: Ընդ որում, կին զինծառայողի՝ տվյալ պաշտոնն զբաղեցնելու հարցը որոշում է համապատասխան պետական լիազոր մարմնի ղեկավարը:

2014 թվականին ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատությունների ընդունելություններին նաև իգական սեռի դիմորդներից հայտեր ընդունելու վերաբերյալ ՀՀ ՊՆ որոշումը կարգավորման դաշտում որոշակի փոփոխություն մտցրեց: Այսպես, «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

համաձայն՝ ռազմաուսումնական հաստատություններ կամ համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ ավարտած զինծառայողների հետուսումնական պայմանագրային զինծառայությունը պարտադիր է: Հետևաբար, ռազմաուսումնական հաստատություններ ընդունվող իգական սեռի անձանց համար, թե՛ սովորելու, թե՛ հետուսումնական ծառայությունը պարտադիր բնույթ է ստանալու:

Կարևորագույնը՝ միջնաժամկետ հեռանկարում

Ընդհանուր առմամբ, ՀՀ զինված ուժերում կանանց և աղջիկների ներգրավման ընդլայնման քաղաքականությունը պետք է հիմնվի զինծառայության վերաբերյալ կանանց և աղջիկների ընկալումների, զինծառայությամբ պայմանավորված հնարավոր առավելությունների և ռիսկերի, ակնկալիքների և մտահոգությունների ուսումնասիրության արդյունքների վրա: ՀՀ զինված ուժերում բարեփոխումները պետք է հենված լինեն նաև կին-զինծառայողների կարծիքների, ընկալումների, գնահատականների, արձագանքների վրա, ինչը հնարավորություն կտա համակողմանիորեն գնահատելու կանանց զինծառայության ընթացիկ իրավիճակն ու հեռանկարները:

Օրենսդրական դրույթների տարամեկնաբանության և դրա արդյունքում խտրականության ռիսկերը վերացնելու նպատակով անհրաժեշտ է հստակեցնել կանանց կողմից զբաղեցվելիք պաշտոնների ցանկը, սահմանել հստակ չափորոշիչներ և ամրագրում մերժման հիմքեր նշանակման հարցերում պետական լիազոր մարմնի ղեկավարի որոշման համար, ինչպես նաև կանանց կողմից չզբաղեցվելիք հաստիքների պաշտոնի անձնագրում կամ նկարագրում հստակ ամրագրել սեռով պայմանավորված տարբերությունները և հիմնավորել համապատասխան կենսաբանական-ֆիզիոլոգիական խոչընդոտները: Անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՀ Զինված ուժերում կանանց ծառայողական առաջխաղացման գործընթացը: Խտրականության դրսևորումների և «ծառայությունների մատուցման», կոռուպցիայի, սեռական շահագործման կամ այլ անթույլատրելի ձևերի վրա հիմնված կանանց առաջխաղացման ապահովման ստվերային համակարգի ձևավորման հնարավորությունը կանխելու նպատակով անհրաժեշտ է նաև իրականացնել մշտադիտարկում և վերահսկողություն:

Սեռական ոտնձգությունների հնարավոր դրսևորումները կանխարգելելու և/կամ արագ բացահայտելու, ինչպես նաև բացահայտման հարցում սեռական ոտնձգության ենթարկված կնոջ օժանդակությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մշակել հատուկ մեխանիզմ, որի շրջանակում սոցիալ-հոգեբանական պատրաստություն անցած կին-զինծառայողներող համալրված ստուգիչ-տեսչական խմբերը պարբերական այցելություններ կիրականացնեն համապատասխան վայրեր՝ տեղում կին զինծառայողների շրջանում վստահության միջավայրի ձևավորման և սեռական ոտնձգությունները բացահայտելու նպատակով:

Մեծապես կարևորվում է նաև ՀՀ-ում գործող զորակոչային և պայմանագրային կարգով զինված ուժերի համալրման խառը համակարգում կանանց զանգվածային ներգրավման և զինծառայության ընթացքում սոցիալական պաշտպանվածության ապահովումը, ինչպես նաև զինծառայությունից հետո սոցիալական պաշտպանվածության առավելությունները երաշխավորումը:

Համառոտագիրը մշակվել է 2014թ-ի հունիսի 9-ին կայացած՝ «Գենդերային մոտեցումների և գենդերային հավասարության ներառումը պաշտպանության ոլորտի բարեփոխումներում. պետական քաղաքականության և իրավական կարգավորման առանձնահատկությունները» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի աջակցությամբ: